Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
ապրիլի 6-ի N 484 - Լ որոշման

Կ Ա Ր Գ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԳՈՅԱՑԱԾ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌՋԵՎ ԿԱՆԳՆԱԾ ՀՂԻ ԿՆՈՋԸ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են կորոնավիրուսի տարածման հետևանքով աշխատանքի շուկայում գոյացած դժվարությունների արդյունքում սոցիալական խնդիրների առջև կանգնած հղի կնոջը միանվագ դրամական օժանդակություն նշանակելուն և վճարելուն առնչվող հարաբերությունները:

2. Միանվագ դրամական օժանդակությունը նշանակվում է բժշկական կազմակերպություններում հաշվառված՝ 2020 թվականի մարտի 30-ի դրությամբ հղիության 12-րդ շաբաթը լրացած կնոջը (այսուհետ՝ հղի), եթե՝

1) հղին այդ օրվա դրությամբ չի հանդիսանում վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր, իսկ նրա ամուսինն ազատվել է աշխատանքից (կամ նրա ամուսինն անհատ ձեռնարկատեր է, սակայն Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված կարգով դադարեցրել է գործունեությունը) 2020 թվականի մարտի 13-ից մինչև 2020 թվականի մարտի 30-ը ընկած ժամանակահատվածում և նույն ժամանակահատվածում չի անցել մեկ այլ աշխատանքի, կամ

2) հղին այդ օրվա դրությամբ չի հանդիսանում վարձու աշխատող կամ անհատ ձեռնարկատեր և չունի ամուսին (չունի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում գրանցված ամուսնություն կամ ամուսնալուծված է կամ ամուսինը մահացած է):

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի N 411-Լ որոշման և սույն կարգի իմաստով քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող անձը չի համարվում վարձու աշխատող (քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա կատարվող աշխատանքը և մատուցվող ծառայությունը չեն համարվում աշխատանք ունեցող):

3. Անձը չի կարող օգտվել սույն կարգով նախատեսված օժանդակությունից, եթե՝

1) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 26-ի N 358-Լ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 30-ի N 410-Լ կամ N 412-Լ որոշումներով նախատեսված միջոցառումների շահառու.

2) հղիության 34-րդ շաբաթը լրացել է մինչև 2020 թվականի մարտի 30-ը ներառյալ:

4. Միանվագ դրամական օժանդակության չափը 100 000 դրամ է:

5. Միանվագ դրամական օժանդակությունը նշանակում և վճարում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացված տվյալների հիման վրա:

6. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը ծառայությանն է տրամադրում բժշկական կազմակերպություններում հաշվառված՝ 2020 թվականի մարտի 30-ի դրությամբ առնվազն 12 շաբաթական, սակայն ոչ ավելի, քան 34 շաբաթական հղիների անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, իսկ առկայության դեպքում՝ նաև հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային փոստի հասցեն:

7. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն էլեկտրոնային եղանակով ծառայությանն է տրամադրում դրամական օժանդակությունը նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտերի (ամուսնության, ամուսնալուծության, մահվան) պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ:

8. Ծառայությունը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունից և Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացված տվյալները և սույն կարգի 2-րդ ու 3-րդ կետերի դրույթները, ձևավորում է շահառուների ցանկը և վճարման ցուցակներ՝ ըստ բանկերի:

9. Վճարման ցուցակում ներառվում են բանկի անվանումը, ինչպես նաև հղիի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, հանրային ծառայությունների համարանիշը, վճարման ենթակա գումարը:

10. Միանվագ դրամական օժանդակությունը վճարվում է անկանխիկ եղանակով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի մարտի 6-ի N 275-Ն որոշման N 3 հավելվածի 2-րդ կետի 1.1-ին ենթակետով երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու համար սահմանված կարգով՝ այդ հավելվածի 18-րդ կետում նշված համաձայնագիր (այսուհետ՝ համաձայնագիր) կնքած բանկերի միջոցով: Ընդ որում, եթե միանվագ դրամական օժանդակության գումարը բանկին փոխանցելու ամսվան հաջորդող 3 ամսվա ընթացքում անձը բանկին չի ներկայացնում գումարն ստանալու պահանջ, ապա գումարը վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

11. Վճարման ցուցակում բանկի ընտրությունը կատարվում է պատահականության սկզբունքով՝ բոլոր շահառուներին հավասարապես բաշխելով համաձայնագիր կնքած բանկերի միջև՝ հաշվի առնելով բանկի մասնաճյուղերի առկայությունը շահառուի հաշվառման (բնակության) վայրի շրջակայքում:

12. Վճարման ցուցակը բանկին փոխանցելու օրվան հաջորդող օրվանից շահառուն, online.ssa.am կայքէջում մուտքագրելով հանրային ծառայությունների համարանիշը կամ անձը հաստատող փաստաթղթի տվյալները, տեղեկանում է վճարման ցուցակում ներառված լինելու կամ չլինելու վերաբերյալ:

13. Միանվագ դրամական օժանդակության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

14. Միանվագ դրամական օժանդակության գումարն ընտանիքի անապահովությունը գնահատելիս ընտանիքի ամբողջական եկամտի հաշվարկի մեջ չի մտնում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ